papauté romaine, voit d'un mauvais œil le prosélytisme latin lui enlever en partie ses fidèles de l'île de Chypre, d'autant plus que, depuis 1441, les chrétiens de Grande Arménie sont sous la juridiction du catholicos installé à Edjmiatzin. Les Arméniens de Chypre semblent s'être accommodés de l'établissement de la domination ottomane, mais rien ne prouve qu'ils ont aidé les conquérants. Les sapeurs arméniens sont recrutés par les autorités turques dans l'Empire ottoman, plus précisément en Caramanie, tout comme les contingents serbes qui avaient combattu, en 1402, à Angora, avaient été recrutés dans leur pays. On peut affirmer, en se fondant sur les chroniques arméniennes et les colophons de manuscrits arméniens, que, si les réactions arméniennes locales, à la veille de la conquête, ont pu être hostiles aux Latins, voire aux Grecs, l'occupation de Chypre par les Ottomans est considérée, dans un cercle arménien plus large, comme un malheur pour la chrétienté (à l'instar de la chute d'Edesse et de Jérusalem au XII° siècle, de Constantinople au XV°). Les tensions intercommunautaires apparues sous la domination vénitienne sont peut-être entretenues par les Turcs: ceci explique les disputes entre Arméniens et Grecs autour de la possession des églises et les différences de position lors de certaines révoltes. Après la conquête ottomane, c'est le rôle stratégique de Chypre en Méditerranée orientale, plus que son rôle économique, qui est mis en évidence. Le nombre des Arméniens diminue, leur rôle s'estompe, même si le monastère de *Sourb-Makar* est un foyer culturel important en même temps qu'un lieu de pèlerinage, visité, par exemple, en 1695, par le catholicos de Sis, Grigor II d'Adana (1680-1693?), accompagné de Hovnan *vardapet* et du diacre Mekhit'ar de Sébaste, futur fondateur de la Congrégation des Mekhitaristes, installée à Venise en 1715, et artisan d'une puissante renaissance culturelle dans le monde arménien.

# ՀԻՍԻՍԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՑՍՐԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԺԸ. ԴԱՐԻ 50-80-ԱԿԱՆ ԹԹ.)

Գոհար Մխիթարեան

*Այսրկովկասի, մասնաւորապէս՝ նրա Հիւսիսարեւելեան հատուածի քաղաքական պատմութեան համար ԺԸ. դ. երրորդ քառորդն ունեցել է ճակատագրական նշանակութիւն: Նադիր շահի մահից յետոյ (1747 թ.) «խռովեալ Պարսկաստանում իւրաքանչիւրոյ աշխարհայ մարզպանք եւ գաւառակալք ինքնագլուխ միապետէին, որք յորչորչէին խան, սուլթան, բէկ եւ այլոց»[1]: Իրավիճակը փոքր-ինչ կայունանում է, երբ «1760 թ. ... Զենդ Քեարիմ-խանն (Քարիմ-խան)[2] ուժեղացաւ ... [եւ] աղուան Ազատ-խանին քշեց»[3], իսկ 1763 թ. ողջ Իրանը միաւորեց մէկ պետութեան կազմի մէջ (բացառութեամբ Խորասանի): Սակայն Իրանում իշխանութեան համար մղուող պայքարից յաղթանակով դուրս եկած (1763 թ.)[4] Քերիմ խան Զենդի իշխանութիւնը Կուրից հիւսիս ձեւական բնոյթ էր կրում[5] պարարտ հող նախապատրաստելով թուրքական ագրեսիայի համար[6]:*

*Սանկտ Պետերբուրգում խիստ անհանգստանում էին ստեղծուած իրավիճակի պատճառով՝ վախենալով ռուսական սահմանների վրայ թուրք-իրանական հնարաւոր ագրեսիայից: Ռուսական դեսպան իշխան Գոլիցինն Իրանից հաղորդում էր, որ, հաշուի առնելով երկրի ներսում ծայր առած քաոսը, դէպքերի նման զարգացումը գրեթէ բացառւում է[7]: Միւս կողմից՝ Օսմանեան կայսրութիւնը փորձելու էր ստեղծուած իրավիճակից օգտուել ու տիրել նախկին իրանական տարածքներին՝ վտանգաւոր հարեւան դառնալով Ռուսաստանի համար: Ռուսական կողմի մտավախութիւններն անհիմն չէին, քանի որ Իրանը քաղաքական այն ուժն էր, ում յաջողուել էր ԺԶ.-ԺԸ. դդ. ընթացքում կասեցնել օսմանեան ագրեսիայի տարածումը Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Աֆղանստանի, Հնդկաստանի ուղղութեամբ, ինչպէս նաեւ՝ դէպի հարաւ՝ Պարսից ծոց[8]: Իրանում ծայր առած խառնակ ժամանակներից ի վեր Ռուսաստանը գրեթէ չէր արձագանքում Քարթլիի թագաւոր Թէյմուրազ Բ-ի օգնութեան խնդրանքներին: Արեւելեան Վրաստանին որեւէ ակտիւ օգնութեան ցուցաբերումը կը նշանակէր յարաբերութիւնների վատթարացում Օսմանեան կայսրութեան հետ: Աւելին, 1752 թ. ապրիլին Օսմանեան կայսրութիւնում գտնուող ռուս ռեզիդենտ Ա. Մ. Օբրեզկո-*

1 ՄՄ, թղթ. 18, վաւ. 195, էջ 16:

2 Իշխանավարել է Իրանում 1750-1779 թթ. (**W. S. Haas**, *Iran*, N. Y., Columbia Univ. Press., 1946, p. 29; **R. N. Frye**, *Iran*, London, 1960, p. 62):

3 *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Գ, Եր., 1955, էջ 176:

4 **Н. И. Пигулевская и др.**, *История Ирана с древ-нейших времен до конца XVIII века*, Л., 1958, с. 328. Բացառութեամբ Խորասանի, ուր հաստատուել էր Նադիր շահի թոռը՝ Շահրուհը, մինչեւ 1796 թ. (*Cambridge history of Iran*, vol. 7, Cambridge University Press, 1991, p. 65).

5 **J. P. Perry**, *Karim Khan Zand*, London, 2006, p. 95-96.

6 *Հ. Գաբրիէլ Վ. Այվազովսքի, Պատմութիւն օսմանեան պետութեանց*, հտ. Բ, Վենետիկ, 1841, էջ 426:

7 **С. Соловьев**, *История России с древнейших времен*, кн. 5., т. XXI-XXV, СПб., 1896, с. 492.

8 *Վ. Բայբուրդեան, Օսմանեան կայսրութեան պատմութիւն*, Եր., 2011, էջ 342:

*վին տրուած ցուցումներում նշում էր. «Եթէ մենք ինքներս պարսկական գործերի մէջ չենք մտնում, ապա չենք կարող Բարձր Դռանը խորհուրդ տալ՝ հետեւելու մեր օրինակին», եւ պէտք էր թուրքական նախարարներին «ներշնչել», որ Բ. Դուռը պէտք է թոյլ տայ պարսիկներին ինքնուրոյն կարգաւորել սեփական գործերը, քանզի նրանց թոյլ լինելու պատճառով թուրքական սահմաններին ոչինչ սպառնալ չէր կարող[9]: Այսպիսով, Ռուսաստանը, հաշուի առնելով հիւսիսային մերձսեւծովեան տարածքների չլուծուած հարցը (առաջին հերթին՝ Ղրիմի), վերադարձ է կատարում Պետրոս Ա-ի կովկասեան քաղաքականութեանը՝ շեշտը դնելով Օսմանեան կայսրութեան զսպման քաղաքականութեան վրայ:*

*Այսրկովկասը 1750-1770-ական թթ. բաժանուած էր ազդեցութեան ոլորտների, Քարթլիի եւ Կախեթի միացեալ թագաւորութեան, Ղարաբաղի, Շաքիի եւ Ղուբայի խանութիւնների գլխաւորութեամբ: Ուժերի այս յարաբերակցութիւնը ձեռնտու էր թէ՛ Ռուսաստանին, թէ՛ Օսմանեան կայսրութեանը եւ թէ՛ Իրանին, որոնց Այսրկովկասը պէտք էր թոյլ եւ մասնատուած՝ հեշտ կառավարուող: Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խանութիւնները փաստցի անկախութիւն ստանալուն զուգահեռ ձեռք են բերում Իրանի, Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի հետ ինքնուրոյն դիւանագիտական յարաբերութիւններ կառուցելու հնարաւորութիւն: ԺԸ. դ. երկրորդ կէսին կիսանկախ քաղաքական ու տնտեսական միաւոր դարձած խանութիւնների ղեկավարները՝ խաները, պէտք է վարէին այնպիսի դիւանագիտութիւն, որը նրանց հնարաւորութիւն կը տար պահպանել անկախութիւնը եւ հոգալ անվտանգութեան խնդիրները: Տարածաշրջանում ստեղծուած միջազգային բարդ իրավիճակը խաների համար այդ խնդիրների ինքնուրոյն իրագործումը գրեթէ անհնար էր դարձրել: Իրավիճակը կը փրկէր միայն ուժեղ եւ յուսալի դաշնակցի առկայութիւնը դրսից: Իրանում միասնական պետութեան բացակայութեան պայմաններում դաշնակիցների ընտրութիւնը պէտք է կատարուէր Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի միջեւ: Իր հերթին Իրանը դժուարութեամբ էր համակերպւում «պատմականօրէն իրեն պատկանող» երկրների կորստի եւ այնտեղ հակառակորդ պետութիւնների (Ռուսաստան եւ Օսմանեան կայսրութիւն) ազդեցութեան ուժեղացման փաստի հետ: Խաները Իրանի, Օսմանեան կայսրութեան եւ Ռուսաստանի նկատմամբ վարում էին խուսանաւելու քաղաքականութիւն: Այսպէս՝ Ֆաթհ Ալի խանը 1760 թ. Դերբենդի դրաւումից անմիջապէս յետոյ կատարուածի մասին գրաւոր յայտնում է թէ՛ Օսմանեան կայսրութեանը, թէ՛ իրանական իշխանութիւններին[10], թէ՛ ռուսական կողմին[11]:*

*Այսրկովկասի ինքնիշխան տիրակալների նկատմամբ Քերիմ խանի՝ որպէս Նադիր շահի պետութեան իրաւայաջորդի քաղաքական իշխանութիւնը պահպանւում էր: Յ. Արղութեանին 1762 թ. գրած նամակում Թարխան Մարգարը գրում էր Հերակլի եւ Քերիմ խանի միջեւ գոյութիւն ունեցող ջերմ յարաբերութիւնների մասին. «Նաեւ մեր պարոնն հետ զան[դ] Քարիմ խանն սէր է դեռ»[12]: Աւելին, Քերիմ խանը ի նշան երախտագիտութեան (Ազատ խանին բռնելու եւ իրեն յանձնելու համար)*

9 **С. Соловьев**, նշ. աշխ. էջ 737:

10 **Л. Меликсет-бек**, *Описание сопредельных с Грузиею стран второй половины XVIII века*,- Труды Тбилисского государственного университета, т. 18, 1941, с. 130.

11 *Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX вв.*,- Сборник документов, отв. ред. В. Гаджиев, М., 1988, с. 91-92.

12 *Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг.*,- Сборник документов, под редакцией М. Нерсисяна, т. 4, Ер., 1990, с. 49.



*Երեւանի խանութիւնը Հերակլ Բ-ին հարկատու ճանաչեց[13]:*

*Թէպէտ Քերիմ խանի իշխանութիւնը փաստացի Կուրից հիւսիս չէր տարածւում, սակայն Ղարաբաղի Փանահ խանն իր կոչումը Քերիմ խան Զենդից էր ստացել[14], իսկ Նախիջեւանի խանը տարեկան որոշակի ծառայութիւն էր մատուցում Քերիմ խանին[15]: Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խանութիւնների դէպքում նման տեղեկութիւններ մեզ չեն հանդիպել: Բացառութիւն է կազմում այն փաստը, երբ Շամախիի բնակիչները, դժգոհ լինելով դեռեւս Նադիր շահի օրօք կառավարիչ նշանակուած Հաջի Մուհամմադ Ալի խանից, դիմում են Քերիմ խանին՝ խնդրելով խան նշանակել Խան Զոբանի ցեղից Շահվերդի խանի որդի Մուհամմադ Սաիդին: Քերիմ խան Զենդի ֆիրմանի համաձայն՝ Մուհամմադ Սաիդը 1761 թ. Շամախիի խան է ճանաչւում[16]: Մինչ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը Ղուբայի խանը եւ վրաց արքան վեքիլի նկատմամբ անկախ կեցուածք էին որդեգրել՝ նրան ամանաթներ չտալով ու զանազան պատրուակներով նրա մօտ չգնալով, իսկ Ղարաբաղի խանը դադարեցնում է Քերիմ խանին հարկ վճարել: Վերջինս, բաւարար ռազմական ու քաղաքական լծակներ չունենալով, աշխատում է յարաբերութիւնները չփչացնել խաների ու Հերակլ Բ-ի հետ[17]:*

*Փաստօրէն, մի կողմից՝ Իրանի տիրակալը ձգտում էր, ողջ Այսրկովկասում իր քաղաքական կամքի հնչեղութիւնը պահպանելով, վերահաստատել Իրանի «պատմական իրաւունքներն» այդ տարածքների նկատմամբ, միւս կողմից, իր տրամադրութեան տակ չունենալով բաւականաչափ ռազմաքաղաքական ու դիւանագիտական ռեսուրսներ, փաստացի ճանաչում էր նրանց կիսանկախ քաղաքական կարգավիճակը: Աւելին, Քերիմ խանը 1770-ական թթ. Վրաստանի հետ քաղաքական յարաբերութիւններ էր պահպանում՝ Հերակլ Բ-ին «սիրոյ նամակ» գրելով, «ուղարկելով նրան թուր եւ ձի՝ ոսկով սպառազինուած»[18]:*

*Ռուսաստանի վերաբերմունքը Այսրկովկասի նկատմամբ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կտրուկ փոփոխութեան է ենթարկւում՝ ուշադրութեան շեշտը դնելով Վրաստանի վրայ: Հաշուի առնելով պատերազմում Վրաստանի գրաւած աշխարհագրական դիրքը՝ որոշում է ընդունւում առաւել ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքել այդ երկրի մասին[19]: Ռուսաստանը վերադառնում է Պետրոս Ա-ի՝ Օսմանեան կայսրութեան՝ Այսրկովկասում, այսպէս կոչուած, զսպման քաղաքականութեանը, որը նշուած ժամանակաշրջանում ստանում է նոր բովանդակութիւն: Ռուսաստանի հա-*

13 *Մելիքսեթ-Բեկ*, նշ. աշխ., էջ 176. **Давид Багратиони**, *История Грузии*, Тбилиси, 1971, с. 163.

14 **Мирза-Адигезаль-Бек**, *Карабаг-наме*, Баку, 1950, с. 72.

15 «Ежегодно кое-чем служил Керим-хану, на что со-держались находящиеся в Ширазе нахичеванские бек-зады» (*Межкавказские политические и торговые связи с Восточной Грузией (конец 60-х - начало 90-х годов XVIII в.*,- Документы и материалы, выпуск I, материалы подобрал и подготовил к печати В. Гамкрели, Тбилиси, 1980, с. 111).

16 **С. Гмелин**, *Путешествие по России для исследования трех царств естества*, ч. 3/I, СПб., 1785, с. 90-91; **M. Atkin**, *Russia and Iran 1780-1828*, Minnea-Polis, 1980, p. 17-18.

17 **О. Маркова**, *Россия, Закавказье и международные отношения в XVIII веке*, М., 1966, с. 142.

18 *Մելիքսեթ-Բեկ*, նշ. աշխ., էջ 177:

19 Արտաքին գործերի կոլեգիայից Եկատերինա Բ-ն պահանջում էր. «Имеют-ли грузинския владетели морския порты на Каспийском или Черном море? Тефлис стоит на одних картах на Черном, а на других на Каспийском море, а в иных в среди земли! О всем сем, в Коллегии Иностранных дел выправяся, прис-лать ко мне» (**А. Цагарели**, *Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии*, т. 1, СПб., 1891, с. 9).

մար կովկասեան աշխարհաքաղաքական «եռանկիւնում» (Ռուսաստան, Իրան, Օսմանեան կայսրութիւն) Օսմանեան կայսրութիւնը պատմականօրէն առանձնայատուկ տեղ էր գրաւում, քանի որ երկրի հարաւային սահմաններին սպառնում էր սուլթանի վասալ Ղրիմի խանութիւնը: Վերջինիս կողմից եկող վտանգը կրում էր աւազակային յարձակումների բնոյթ եւ հիւսիսից սպառնացող վտանգի համեմատութեամբ (1617 թ. Ստոլբովեան պայմանագրով ռուս-շուեդական շփման գօտին մօտեցել էր Ռուսաստանի կենտրոնական շրջաններին) «մրցակցութեան» չէր դիմանում: Թէեւ Պետրոս Ա-ին յաջողուել էր լուծել Բալթիկ ծովի խնդիրը, սակայն Ռուսաստանի հարաւային սահմանների ապահովման գործը մնաց նրա իրաւայաջորդ Եկատերինա Բ կայսրուհուն (1762-1796): Ռուսաստանի կառավարող շրջանները հասկանում էին, որ պետութեան ռազմաքաղաքական շահերի համար Օսմանեան կայսրութիւնը կարող է վտանգաւոր լինել լեհական հարցում, ինչպէս նաեւ՝ օգտագործել կենտրոնացուած պետութեան բացակայութիւնը Իրանում եւ գրաւել Կասպից ծովի ափամերձ տարածքները[20]: Օսմանեան կայսրութեան հաստատուելը Կասպից ծովի արեւմտեան ափերին կը նշանակէր նաւ ռուս-իրանական առեւտրի կենտրոնացում թուրքական ձեռքերում եւ «ճանապարհ դէպի ռուսական ներքին սահմանները»[21]: Ղրիմի հարցի շուրջ (որպէս Սեւծովեան խնդրի բաղադրիչ մաս) կանցլեր Մ. Վորոնցովը 1762 թ. յուլիսի 6-ի՝ կայսրուհուն ուղղած իր գրութեան մէջ նշում էր, որ Ռուսաստանի հարեւանութիւնը Ղրիմի խանութեանն[22] աւելի վտանգաւոր էր, քան Օսմանեան կայսրութեանը: Հետեւաբար՝ Ռուսաստանը պէտք է չէզոքացնէր հարաւից եկող վտանգը, քանի որ Ղրիմի թերակղզու աշխարհաքաղաքական բարենպաստ դիրքը իրաւացիօրէն «ռուսական եւ թուրքական տիրոյթների բանալին» էր: Ռուսաստանի պետական անվտանգութեան շահերից էր բխում Ղրիմի խանութեան ազատագրումը թուրքական տիրապետութիւնից որպէս անկախ իշխանութիւն կամ ռուսական կայսրութեան մաս: Այդ դէպքում Սեւ եւ Ազովի ծովերը, մերձաւորարեւելեան եւ հարաւային բոլոր երկրները կը յայտնուէին Ռուսաստանից կախուածութեան ու «վախի» մէջ, եւ ողջ առեւտրի ուղղութիւնը կը տեղափոխուէր դէպի Ռուսաստան[23]:

Պատերազմի առաջին օրերից թուրքական կողմը փորձում է իր կողմը գրաւել Կաբարդայի իշխաններին եւ հասնել նրանց նկատմամբ Ղրիմի խանի գերագոյն իշխանութեան ճանաչմանը: Այդ նպատակով կաբարդական իշխանների եւ Դաղստանի տիրակալների մօտ են ուղարկւում թուրքական լրտեսներ[24]: Չէր դադարում թուրքական ագրեսիան նաեւ Այսրկովկասի նկատմամբ՝ ստիպելով ռուսական իշխանութիւններին ուշադրութիւնից չհեռացնել նաեւ տարածաշրջանի խանութիւններին: Դեռեւս 1765 թ. աշնանը Ֆաթհ Ալի խանին անձամբ նամակ է գրում արտաքին գործերի կոլեգիայի նախագահ կոմս Ն. Ի. Պանինը: Ն. Պանինը փորձում էր ռուսական առեւտրականների նկատմամբ Ֆաթհ Ալիի բարեհոգութեան մասին հաւաստիքներ ստանալ՝ փոխարէնը յայտնելով Եկատերինա Բ կայսրուհու բա-

20 *Архив князя Воронцова*, т. 25, М., 1882, с. 300.

21 Նոյն տեղում, էջ 301:

22 Մ. Վորոնցովը Ղրիմի խանութեան անուան տակ (ինքն օգտագործում է Փոքր Թաթարիա անուանումը) հասկանում էր Սեւ ծովի մօտ, Կուբանում, Դոն, Դնեպր, Բուգ, Դնեստր եւ Դանուբ գետերի միջակայքում ընկած տարածքները, որտեղից Ղրիմի խանը կարող էր հաւաքել մինչեւ 70.000 հեծելազօր (*Архив князя Воронцова*, с. 308):

23 *Архив князя Воронцова*, с. 309.

24 **Н. Смирнов**, *Политика России на Кавказе в XVI-XIX вв.*, М., 1958, с. 93.



բեհաճութիւնը նրա նկատմամբ[25]: Ռուսական պետութեան նման պաշտօնատար անձն առաջին անգամ էր կայսրուհու յանձնարարականով նամակ գրում Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խանին: Թուրք-ռուսական յարաբերութիւնների նախապատերազմական թէժ պահին ռուսական իշխանութիւններին անհրաժեշտ էր ստանալ Հիւսիսարեւելեան Այսրկովկասի ազդեցիկ խանի քաղաքական աջակցութիւնը: Դա հնարաւորութիւն կը տար ցանկացած պահին օգտագործել Ֆաթհ Ալի խանի ազդեցութիւնն ու հեղինակութիւնը դաղստանեան տիրակալների շրջանում յարաբերութիւնների կարգաւորման համար եւ խանի միջոցով վերահսկել Օսմանեան կայսրութեան ու խանների փոխյարաբերութիւնները: Ռուսական հետախուզութիւնը 1769 թ. յայտնում էր, որ սուլթանի կողմից նամակներ էին ուղարկուել Գանձակի, Շամախիի, Դերբենդի եւ Ղուբայի, Երեւանի խաներին, վրաց տիրակալին, լեռնական առաջնորդներին, Ղարաղայթաղի ուցմիին եւ Կաբարդայի իշխաններին՝ պահանջելով ճանաչել թուրքական հպատակութիւնը: Քանի որ Ֆաթհ Ալի խանի տիրոյթները գտնուում էին Կասպից ծովի առափնեայ շրջաններում, ապա նրանից պահանջւում էր արգելել ռուսական զօրքի տեղաշարժը ծովով ու ցամաքով յանուն սեփական անվտանգութեան եւ «ընդհանուր օրէնքի»[26]: Փաստօրէն 1760-1770-ական թթ. Հիւսիսարեւելեան Այսրկովկասը յայտնւում է տեղեկատուական պատերազմի մէջ՝ դրանց տիրակալներին վերածելով պատերազմի պասիւ մասնակիցների:

Խորհրդային պատմագրութեան մէջ կարծրացած այն տեսակէտը, թէ «մերձկասպեան նահանգներում թուրքերի նկատմամբ համակրանքի բացակայութիւն»[27] գոյութիւն ունէր, ամենեւին էլ չէր համապատասխանում իրականութեանը: Այսրկովկասեան տիրակալները երեք խոշոր պետութիւնների նկատմամբ որդեգրել էին խուսանաւելու քաղաքականութիւն՝ միտուած սեփական անկախութեան պահպանմանը: Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խաներին յաջողւում է պատերազմի ընթացքում «չէզոք» դիրքորոշում որդեգրել: Այդ քայլը բացատրւում է նրանով, որ խաները, օգտուելով ստեղծուած պատերազմական իրավիճակից, փորձում էին Իրանից «անկախ» քաղաքականութիւն վարել: Այսպէս, Հերակլ Բ-ն 1769 թ. հաղորդում էր, որ Ֆաթհ Ալի խանը դիմել է թուրքական սուլթանին (ինչպէս ԺԸ. դ. սկզբին Սուրխա խան Ղազիկումուխցին)[28] օգնելու իրեն տիրել Շամախին եւ Շիրվանին՝ փոխարէնն առաջարկելով իր ծառայութիւնները[29]: Խաների նման քաղաքական կեցուածքն առաւել քան կանխատեսելի էր, քանի որ Նադիր շահի պետութեան անկումից յետոյ Հիւսիսարեւելեան Այսրկովկասի կիսանկախ խանութիւնների տիրակալները ստացել էին փաստացի անկախութիւն եւ նրանց համար օրակարգային խնդիր էր դարձել սեփական անվտանգութեան ապահովումը: Այդ խանութիւնների համար վերադարձն իրանական պետական համակարգ սպառնում էր նրանց կիսանկախ կարգավիճակին: Հետեւաբար՝ նրանց համար հեռաւոր եւ նոյնադաւան Կ. Պոլսի գերագոյն իշխանութեան ճանաչումն առաւել նախընտրելի էր դարձել, քանի որ իրենց կը յաջողուէր պահպանել անկախութիւնը տեղերում:

Հիւսիսարեւելեան Այսրկովկասում 1770-ական թթ. կէսերին ուժեղանում է

25 *Русско-дагестанские отношения в XVIII–начале XIX вв.*, с. 115.

26 *Армяно-русские отношения во II половине XVIII в., с. 83.*

27 **Օ. Маркова**, նշ. աշխ., էջ 142:

28 **Л. Меликсет-бек**, նշ. աշխ., էջ 130:

29 *Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века*, ч. III, вып. I, Т., 1988, с. 364.

Ղուբայի Ֆաթհ Ալի խանի քաղաքական դերակատարումը[30] սպառնալով Դաղստանի տիրակալների ինքնուրոյնութեանը: Ղարաղայթաղի ուցմիի, Ղազիկումուխի խանի, Թաբասարանի կադիի եւ դաղստանեան միւս տիրակալների միացեալ ուժերի եւ Ֆաթհ Ալի խանի միջեւ Ղուբայի խանութեան Գաւդուշա կոչուող դաշտավայրում 1774 թ. տեղի է ունենում ճակատամարտ: Ղուբայի խանը ծանր պարտութիւն է կրում եւ քաշւում է Սաղիան, որտեղից նամակով ռազմական օգնութիւն է խնդրում Եկատերինա Բ կայսրուհուց[31]: Յայտնուելով անելանելի իրավիճակում՝ Ֆաթհ Ալի խանը ռուսական կառավարութեանը խնդրում էր իրեն վերադարձնել «Շիրվանի շրջանը»՝ իրեն կոչելով ռուսական կայսերական գահի համար աղօթող[32]: Հիւսիսարեւելեան Այսրկովկաս Ռուսաստանի ռազմական ներխուժման համար առիթ է ծառայում Ղարաղայթաղի ուցմիի կողմից Սանկտ Պետերբուրգի գիտութիւնների ակադեմիայի գիտական արշաւախմբի ղեկավար ակադեմիկոս Ս. Գմելինի գերեվարումը եւ մահը (1774 թ.)[33]: Եկատերինա Բ-ն Կովկասեան գծի ռուսական զօրքերի հրամանատար գեներալ Դը Մեդեմին 1774 թ. սեպտեմբերի 5-ին գրած ցուցումներում, անդրադառնալով կատարուած փաստին, նշում էր, որ դաղստանեան տիրակալների եւ «պարսկական ղեկավարների» կողմից տեղի էր ունեցել կովկասեան լեռնական ժողովուրդների մօտ ընդունուած հիւրասիրութեան սովորոյթի խախտում[34]: Այսինքն, հասկանալով կովկասեան հարցերում դաղստանեան տիրակալների դերն ու նշանակութիւնը, ռուսական կայսրութեան հպատակի նկատմամբ ուցմիի անյարգալից վերաբերմունքն արժանանում է մեղմ գնահատականի: Փաստօրէն, Ռուսաստանը դառնում էր Հիւսիսարեւելեան Այսրկովկասի եւ Դաղստանի միջաւատատիրական յարաբերութիւնների քաղաքական միջնորդն ու դատաւորը՝ այդ առաքելութիւնը ծառայեցնելով ռուսական կայսերական շահերին: Ռուսաստանը գիտակցում էր, որ սեւծովեան չլուծուած խնդիրների առկայութեան պայմաններում Այսրկովկասում ռազմական միջամտութիւնը կը խախտէր նաեւ ռուս-թուրքական այդքան թանկ գնով ձեռք բերուած խաղաղութիւնը: Ռուսաստանի ռազմական միջամտութիւնը Հիւսիսարեւելեան Այսրկովկասում կը հանդիսանար Օսմանեան կայսրութեան համար ռեւանշի գնալու ազդակ: Այդ պատճառով էր, որ երբ գեներալ Դը Մեդեմն, առանց կայսրուհու գիտութեան, գրաւում է Դերբենդը, իսկ Ֆաթհ Ալի խանը քաղաքի բանալիներն ուղարկում է Եկատերինա Բ-ին, վերջինիս պատասխանն իրեն սպասել չի տալիս: Զայրացած կայսրուհին Գ. Պոտեմկինի՝ Կովկասում քաղաքական իրավիճակի մասին զեկոյցի լուսանցքի վրայ կարմիր մատիտով հրամայում է անյապաղ վերադարձնել[35]: Քաղաքական որոշում է կայացւում Հիւսիսարեւելեան Այսրկովկասում անյապաղ վերականգնել Ֆաթհ Ալի խանի իշխանութիւնը[36]:

Այսպիսով, Եկատերինա Բ-ն, հաշուի առնելով Հիւսիսարեւելեան Այսրկովկասում ձեւաւորուած բարդ ռազմաքաղաքական իրավիճակը, որոշում է ետ կանգնել տարածաշրջանում ռազմական հաստատումից եւ որդեգրում է առաւել զգուշաւոր քաղաքականութիւն՝ Օսմանեան կայսրութեանը չհրահրելու համար: Միեւնոյն ժամանակ Ռուսաստանը հասկանում էր, որ Դաղստանի տիրակալների ուժեղացումը Հիւսիսարեւելեան Այսրկովկասում նշանակում էր թուրքական ազդեցութեան մեծացում, եւ Մեդեմի ներխուժումը տարածաշրջան կոչուած էր կանխելու դա: Ռուսաստանը վերականգնում է քաղաքական հաւասարակշռութիւնը Հիւսիսարեւելեան Այսրկովկասում՝ օգնելով Ֆաթհ Ալի խանին վերամիաւորել մինչեւ 1774 թ. իր տիրոյթները: Միւս կողմից՝ Ռուսաստանը չէր կարող հանդուրժել իր հարաւային սահմաններին նոր եւ ուժեղ պետութեան գոյութիւնը: Դերբենդի բանալիների հետ միասին Ֆաթհ Ալի խանն ուղարկում է նաիբ Միրզա բեկի հետ Եկատերինա Բ-ի անունով նամակ, ուր դիւանագիտօրէն յիշեցնում էր իր պապի եւ հօր բարեկամական վերաբերմունքը ռուսական գահին նկատմամբ: Խանը նշում էր, որ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ սուլթանի՝ Կարս եկած պատուիրակները փորձում էին իրեն թանկարժէք նուէրներով թեքել իրենց կողմը, սակայն ապարդիւն: Նա պահանջում էր իր համար Ղրիմի խանի եւ վրաց թագաւորի[37] նման քաղաքական կարգավիճակի տրամադրում[38]: Հեռատես Ֆաթհ Ալի խանը չէր «մոռանում» ընդգծել, որ Շիրազից Քերիմ խանի կողմից վստահուած անձինք եւս թանկարժէք նուէրներով, զօրքով ու մեծ գումարով ցանկանում էին իրեն «թեքել» ծառայութեան դէպի Իրան, բայց ինքը մնացել էր հաւատարիմ ռուսական գահին[39]: Փաստօրէն, Ֆաթհ Ալի խանը Հիւսիսարեւելեան Այսրկովկասում ռուսական պետական շահերի համար իր քաղաքական դերն ու նշանակութիւնն էր ընդգծում:

Այսպիսով՝ Ռուսաստանը տարածաշրջանում առաջին ռազմական միջամտութեան դէպքում ստանում է տեղի ուժեղագոյն խաներից մէկի՝ իր քաղաքական դիրքորոշումը «վաճառելու» ուղղակի առաջարկ, այն է՝ չէզոքութիւն քաղաքական որոշակի կարգավիճակի եւ ռուսական արքունիքի հովանաւորութեան դիմաց: Վերականգնելով Ֆաթհ Ալի խանի իշխանութիւնը՝ Ռուսաստանն ընտրում էր արդէն ծանօթ եւ որոշ առումներով կանխատեսելի Դերբենդի եւ Ղուբայի խանին, քան թէ Դաղստանի ազդեցիկ տիրակալների քաղաքական միացեալ ուժի յաղթանակը: Սակայն ռուսական կառավարութիւնը, պաշտպանելով Ֆաթհ Ալի խանին, կորցնում էր խաղաղարարի եւ արդարացի դատաւորի իր համբաւը դաղստանեան տիրակալների մօտ, որոնց քաղաքական դիրքորոշումը ռուս-իրանական եւ ռուս-թուրքական յարաբերութիւններում վճռորոշ դեր ունէր:

Այնուամենայնիւ, Ռուսաստանի համար 1770-ական թթ. կէսերին խիստ վտանգաւոր իրավիճակ էր ստեղծուել: Նրա շահերից էր բխում, որ Իրանն այդուհետեւ եւս մնար առանց օրինական գերագոյն իշխանութեան, իսկ ռուսական կողմի ոտնձգութիւնները Այսրկովկասի նկատմամբ կարող էին յանգեցնել Իրանի միաւորմանը մէկ միասնական պետութեան մէջ: Ռուսաստանի՝ Ղզլարից դէպի Իրան սահմանի տեղաշարժը կը յանգեցնէր թուրքական ագրեսիային: «Իրանական տարածքների» նկատմամբ Ռուսաստանի ակտիւ ռազմա-

30 **J. Perry**, *The Zand Dynasty*,- The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 96.

31 **Искендер-Бек-Ганджинский**, *Жизнь Фет-Алихана Кубинского*,- газ. «Кавказ», N 48, 1847, с. 221.

32 *Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в.*,- Сборник документов, отв. ред. В. Гаджиев, М., 1988, с. 156-158.

33 *Краткое описание жизни и службы Тайнаго Советника Карла Ивановича Габлица. Сын отечества*, ч. 73, N XLI, 1821, СПб., с. 102-103.

34 *Сборник Императорского русского исторического общества* (այսուհետեւ՝ СИРИО), т. 135, СПб., 1911, с. 210.

35 «Черт велел к Дербенту идти», ապա աւելացնում է. «Советую возвратить: его превосходительства кратчайшее дурачество из дурачеств есть лучшее» (СИРИО, т. 27, СПб., 1880, с. 59-60).

36 СИРИО, т. 42, СПб., 1885, с. 401.



37 Տե՛ս **В. Мачарадзе**, *Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века*, ч. 3, вып. 2, Тбилиси, 1997, с. 767-769.

38 *Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в.*, с. 158; **П. Бутков**, *Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год*, ч. 2, СПб., 1869, с. 21.

39 Նոյն տեղում, էջ 157-158:

*կան միջամտութեան դէպքում Օսմանեան Թուրքիան չէր կարող չէզոք մնալ[40]: Հաշուի առնելով Հիւսիսարեւելեան Այսրկովկասի շուրջ ծաւալուող քաղաքական զարգացումները եւ չցանկանալով յարաբերութիւնները լարել Իրանի եւ Օսմանեան կայսրութեան հետ՝ կայսրուհին գեներալ Դը Մեդեմին 1775 թ. յուլիսի 28-ին գրում է, որ Դերբենդն իր աշխարհագրական դիրքով «պատկանում է Իրանին», եւ նրա հետ յարաբերութիւնները բարդացնել Ռուսաստանը չի պատրաստւում: Ապա հրամայում էր Ֆաթհ Ալի խանին խորհուրդ տալ ինքնուրոյն կարգաւորել յարաբերութիւնները ուցմիի հետ[41]:*

*ԺԸ. դ. 80-ական թթ. Իրանում Քերիմ խանի մահուան հետեւանքով (1779 թ.) ծայր առած քաղաքական անկայունութիւնն անմիջապէս արձագանք է գտնում Այսրկովկասում: Այստեղ քաղաքական գերիշխանութիւն հաստատելու համար հակամարտող երկու խմբաւորումներ են առաջանում, որոնցից մէկը ղեկավարում էր Ղարաբաղի Իբրահիմ խանը (նրա դաշնակիցն էր Վրաց Հերակլ Բ-ն), միւսը՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանը: Այսրկովկասում ռազմաքաղաքական միանձնեայ գերիշխանութեան հաստատման համար Ֆաթհ Ալի խանին անհրաժեշտ էր տիրել Ղարաբաղի խանութեանը, սակայն 1780-1781 թթ. երկու անյաջող արշաւանք է կատարում դէպի Ղարաբաղ: Ֆաթհ Ալի խանը խիստ անհանգստացած էր Այսրկովկասում Հերակլ Բ-ի եւ Ղարաբաղի խանի քաղաքական դերի մեծացմամբ: Կողմերին յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ էր ստանալ Ռուսաստանի աջակցութիւնը: Այս հանգամանքով էր պայմանաւորուած կողմերի՝ Ռուսաստանի մօտ միմեանց սեւացնելու քաղաքականութիւնը: Այսպէս՝ Ղուբայի խանը ռուսական իշխանութիւններին գրում էր, որ Ադարբայջանում խաների եւ առաջնորդների համար անտանելի է այն հանգամանքը, որ վրացին («чтоб он, будучи из Грузинцов») եւ Իբրահիմ խանը տիրանան ադարբայջանական բոլոր քաղաքներին[42]: Իր հերթին Հերակլ Բ-ն 1782 թ. Պ. Պոտեմկինին ուղղուած նամակում Ֆաթհ Ալի խանին անուանում էր անհաւատ ու կեղծաւոր[43] մեղադրելով նրան թուրքերի հետ նամակագրական կապեր ունենալու մէջ:*

*Ֆաթհ Ալի խանը փորձում է կեանքի կոչել Քերիմ խան Զենդի յաւակնոտ ծրագիրը՝ կապուած Վրաստանում իշխանափոխութեան հետ: Այսպէս՝ Քերիմ խանը, չկարողանալով իր տիրապետութիւնը տարածել Այսրկովկասի վրայ, որպէս խաղաքարտ օգտագործում է իր մօտ ապաստանած Վախթանգ Զ-ի թոռանը՝ թագաժառանգ Ալեքսանդրին, Վրաստանում գահ բարձրացնելու նպատակով: Քերիմ խանը, նախապատրաստուելով Վրաստանում իշխանափոխութիւն իրականացնել, 1777-1778 թթ. Գիլանի Հեդայեթ խանի միջոցով[44] Ղարաղայթաղի ուցմիին եւ դաղստանեան միւս տիրակալներին նուէրներով շահագրգռում է արշաւել Վրաստան, սակայն վեքիլի վերահաս մահուան հետեւանքով այդ ծրագիրը ձախողւում է[45]: Նախաձեռնութիւնն իր ձեռքն է վերցնում Ղուբայի խանը եւ 1782 թ. օգոստոսին Դերբենդում հիւրընկալում իշխան Ալեքսանդրին: Պ. Պոտեմկինը ստիպուած էր 1783 թ. աշնանը զինուած ուժեր կենտրոնացնել Սուլակ եւ Թերեք գետերի շրջանում՝ դաղստանեան տիրակալների առաջխաղացումը կանխելու համար: Թարքիի շամխալն ու Ղուբայի Ֆաթհ Ալի խանը ստիպուած են լինում ետ կանգնել դէպի Ղարաբաղ նախատեսուող արշաւանքից եւ ռուսական կողմին յանձնել իշխան Ալեքսանդրին[46]: Փաստօրէն, Ռուսաստանի ճնշմամբ Ֆաթհ Ալի խանի՝ վրաց իշխան Ալեքսանդրի հետ կապուած նախաձեռնութիւնն ու դէպի Ղարաբաղ կազմակերպուող արշաւանքն անյաջողութեան են մատնւում: Խանը, չկարողանալով լուծարել վրաց-ղարաբաղեան դաշնութիւնը, հայեացքն ուղղում է դէպի Իրան: Ղուբայի խանն իր պաշտպանութեան տակ էր առել ոմն Աբաս Միրզային (իբր Սեֆեանների արքայատոհմի ներկայացուցիչ եւ շահ Հուսէյնի ժառանգներից մէկը) եւ փորձում է նրան Իրանում գահ բարձրացնել: Այդ նպատակով նա 1784 թ. մեծաթիւ զօրքով շարժւում է Արդաբիլ, Մեշքին եւ այնտեղ կառավարիչներ նշանակում: Ֆաթհ Ալի խանի իշխանութեան տարածումը Կուրից հարաւ խիստ անհանգստացնում է ռուսական կառավարող շրջաններին: Միւս կողմից՝ 1785 թ. Ղարաղայթաղի ուցմին եւ աւար խանը, վախենալով Ղուբայի յետագայ հզօրացումից եւ ստանալով ռուսական իշխանութիւնների աջակցութիւնը, նախապատրաստւում են յարձակուել Ֆաթհ Ալի խանի տիրոյթների վրայ: Գ. Պոտեմկինի կոչտ արձագանքը ստիպում է Ֆաթհ Ալի խանին զօրքը ցրել եւ վերադառնալ Հիւսիսարեւելեան Այսրկովկաս: Այնուամենայնիւ, Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պոտեմկինը, ցանկանալով ռուսական ազդեցութեան ոլորտից դուրս չթողնել Ֆաթհ Ալի խանին, 1786 թ. աշնանը նրան ուղղուած նամակում դիմում է «պատուական խան» («почтенный хан») եզրոյթով[47]:*

*Ղարաղայթաղի ուցմին Հիւսիսարեւելեան Այսրկովկասի քաղաքական քարտէզի վերաձեւման հետաքրքիր տարբերակ է առաջարկում իշխան Պ. Պոտեմկինին (1786 թ. գարուն): Ըստ նրա՝ տարածաշրջանում խաղաղութիւն կարելի էր հաստատել միայն այն պարագայում, եթէ «անյապաղ» Դերբենդում իշխանութիւնը յանձնուէր Իմամ Ղուլի խանի թոռանը, Ղուբայում Ֆաթհ Ալի, իսկ Բաքուում՝ Բաքուի խաներին: Այդ ծրագիրը կեանքի կոչելու նպատակով ուցմին պահանջում էր 2000-անոց զօրաբանակ ուղարկել իրեն[48]: Ուցմին ձգտում էր Ռուսաստանի ռազմական միջամտութեամբ եւ քաղաքական համաձայնութեամբ թուլացնել Հիւսիսարեւելեան Այսրկովկասում Ֆաթհ Ալի խանի քաղաքական ազդեցութիւնը: Ուցմիի առաջարկութիւնն ունէր նաեւ հարցի միւս կողմը, քանի որ առաջարկում էր արմատախիլ անել Կովկասում Օսմանեան կայսրութեան կողմից հրահրուող շէյխ Մանսուրի (Ուշուրմայի) շարժումը: Սակայն գեներալ-նահանգապետ Պ. Պոտեմկինն ուցմիի այդ առաջարկութիւնը թողնում է անպատասխան՝ Այսրկովկասում պահպանելով Ռուսաստանի կովկասեան քաղաքականութեան համար արդէն երեք տասնամեակ կանխատեսելի Ֆաթհ Ալի խանի գերիշխանութիւնը:*

*Այդ նոյն ժամանակ Աղա Մուհամմադ խանին յաջողւում է իրեն ենթարկել Սպահանը եւ հայեացքն ուղղել դէպի Այսրկովկաս: Ֆաթհ Ալի խանը 1786 թ. բարեկամութեան առաջարկով դեսպանութիւն է ուղարկում Պ. Պոտեմկինի մօտ, իսկ 1787 թ., Թարքիի շամխալի հետ պարտութեան մատնելով Իբրահիմ խանին, դիմում է ռուսական իշխանութիւններին կայսերական հովանաւորութիւն ստանալու խնդրանքով[49]: Ռուսական հովանաւորութիւնը ստանալու համար Ֆաթհ Ալի խանի ջանքերը խթարւում են 1787 թ.*

40 СИРИО, т. 135, СПб., 1911, с. 473.

41 Նոյն տեղում, էջ 437:

42 **А. Цагарели**, *Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии*, т. 2, вып. 2, СПб., 1902, с. 20-21.

43 *Межкавказские политические и торговые связи с Восточной Грузией (конец 60-х-начало 90-х годов XVIII в.)*, с. 56.

44 *Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в.*, с. 164-165.

45 *Акты, собранные Кавказскою Археографическою Комиссиею*, т. 1, Тифлис, 1866, с. 91.



46 **П. Бутков**, նշ. աշխ., էջ 133:

47 *Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в.*, с. 201.

48 Նոյն տեղում, էջ 190:

49 СИРИО, т. 47, с. 193.

*ռուս-թուրքական պատերազմի սկսուելու պատճառով: Այդ ընթացքում Հերակլ Բ-ի եւ Ցաթհ Ալի խանի յարաբերութիւնները դառնում են դաշնակցային, եւ նրանց միջեւ 1787 թ. պայմանագիր է կնքւում՝ ուղղուած Իբրահիմ խանի դէմ: Ստանալով Շաքիի Մուհամմադ Հասան խանի հնազանդութիւնը՝ Ցաթհ Ալի խանը Հերակլ Բ-ի հետ 1788 թ. գրաւում է Գանձակը: Դաշնակիցները ծրագրում էին, որ 1789 թ. գարնանը Ղուբայի խանն անցնելու էր Ա-րաքսը եւ շարժուէր դէպի Իրանի խորքը, իսկ Հերակլը վերահսկելու էր իրավիճակն Այսրկովկասում ու Դաղստանում, սակայն Ցաթհ Ալի խանի վերահաս մահը (1789 թ.) ձախողում է պլանները:*

*Այսպիսով՝ Գէորգիեւեան դաշնագրի կնքումից եւ Ղրիմի միաւորումից յետոյ (1783 թ.) ռուսական կառավարութիւնը Այսրկովկասի եւ մերձկասպեան խանութիւնների նկատմամբ իրականացուող պասիւ՝ «անտարբերութեան քաղաքականութիւնը» փոխարինում է ակտիւ դիւանագիտութեամբ[50]: Հիւսիսարեւելեան Այսրկովկասի խաներն անհանգստանում էին տարածաշրջանում ռուսական իշխանութեան ամրապնդմամբ, ինչի հետեւանքով իրենք կորցնելու էին ինքնուրոյնութիւնը: Վրաստանում գտնուող ռուսական ռեզիդենտ Ս. Բուրնաշեւը նշում էր, որ «ադրբիջանական ինքնիշխան խաները», վախենալով տարածաշրջանում ռուսական ազդեցութեան ամրապնդումից, շրջւում էին դէպի Թուրքիա[51]:*

*Ցատկանշական է, որ 1783 թ. յետոյ Ռուսաստանը կովկասեան տիրակալների ու խաների նկատմամբ առաւել կոշտ դիրքորոշում էր որդեգրել: Այսպէս՝ 1783 թ. Իբրահիմ խանը, վախենալով հայկական թագաւորութեան վերստեղծման Ռուսաստանի ծրագրերից, իր հնազանդութիւնն է յայտնում ռուսական գահին եւ պատրաստակամութիւն յայտնում հարկ վճարել, ապա իշխան Պ. Պոտեմկինը ասում է, որ «հարկը, որ հարկում է ռուսական կայսրուհին, դա հաւատարմութիւնն է»[52]: Սակայն ԺԸ. դ. 80-ական թթ. Ռուսաստանն այսրկովկասեան տիրակալներից ակնկալուող «հարկի»՝ հաւատարմութեան դիմաց ստիպուած էր հաշուի նստել նրանց հետ: Շուրջ երեսուն տարի մասնակցելով տարածաշրջանային զարգացումներին՝ Ռուսաստանը Դերբենդից մինչեւ Բաքու ձգուող տարածքի վրայ առաւել նախընտրելի տարբերակ էր համարում կանխատեսելի քաղաքական իրավիճակը՝ Ցաթհ Ալի խանի գերիշխանութեամբ:*

*Այսպիսով՝ Ռուսաստանը չէր ցանկանում խախտել Հիւսիսարեւելեան Այսրկովկասում իրերի նախկին վիճակը, որը ձեւաւորուել էր 1750-1770-ական թթ. ընթացքում, անգամ՝ չէյխ Մանսուրի վտանգի վերացման հնարաւորութեան պարագայում: Այս հանգամանքը խօսում էր Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի համար Հիւսիսարեւելեան Այսրկովկասի ունեցած կարեւոր նշանակութեան մասին:*

*Այսպիսով՝ ԺԸ. դ. երրորդ քառորդում ռուսական կառավարող շրջանները Պետրոս Ա-ի կովկասեան քաղաքականութեանը՝ մերձկասպեան տարածքները մինչեւ Գիլան զէնքով գրաւելու ծրագրին, հակադրում են թուրքական վտանգը չէզոքացնելու եւ դիւանագիտական ճանապարհներով Օսմանեան կայսրութեանը հնարաւոր հեռաւորութեան վրայ պահելու ռազմավարութիւնն ու տեղի խաներին սիրաշահելու քաղաքականութիւնը:*

50 **О. Маркова**, նշ. աշխ. էջ 159:

51 **С. Бурнашев**, *Описание областей Адребижанских в Персии и их политическаго состояния*, Курск, 1793, с. 5.

52 **П. Бутков**, նշ. աշխ., էջ 144:

# ՆԻԿՈՄԻԴԻԱՅԻ «ԲԻԹԱՆԻԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910-1912 ԹԹ.)

Մարիամ Յովսէփեան

*Նիկոմիդիան Օսմանեան կայսրութեան հայկական գաղթավայրերից մէկն էր: 1878 թ. դրութեամբ Նիկոմիդիա գաւառում հայերի թիւը հասնում էր 70.000-ի[1]: Թէեւ հայերն ապրում էին Նիկոմիդիայի տարբեր բնակավայրերում, բայց հիմնականում կենտրոնացած էին Նիկոմիդիայի գաւառակենտրոն Իզմիտում, Պարտիզակ եւ Ատաբազար քաղաքներում եւ Օվաճըգ գիւղաւանում: Նիկոմիդիա գաւառում հայերը կարեւոր տնտեսական լծակներ ունէին: Բաւական է ասել, որ Իզմիտի կենտրոնական քարակերտ երկու շուկաների տէրերը հայեր էին, իսկ Պարտիզակում պաշտօնավարում էին ոչ թէ թուրք, այլ հայ պաշտօնեաներ, եւ այդ քաղաքը հիմնադրման օրից մնում էր զուտ հայկական բնակավայր[2]:*

*Ընդհանրապէս Իզմիտում Ի. դարի սկզբին գործում էր հայկական 8 դպրոց: Դրանցից մէկը՝ Ազգային մեծ վարժարանը, տալիս էր միջնակարգ կրթութիւն: Պարտիզակում կար հայկական 4 դպրոց, որոնցից մէկը՝ ամերիկեան միսիոներների հիմնած վարժարանը, ապահովում էր միջնակարգ կրթութիւն: Ատաբազարում կար հայկական 5 դպրոց: Դրանց թւում էր միջնակարգ ուսումնական հաստատութիւն համարուող Հայուհեաց դպրոցը՝ հիմնուած ամերիկեան բողոքականների կողմից: Օվաճըգը յայտնի էր Վարդուհեան ազգային վարժարանով, իսկ Արմաշ գիւղը համարւում էր Նիկոմիդիայի մշակութային կարեւոր կենտրոններից մէկը, մասնաւորապէս՝ իր Դպրեվանքով: Այն ունէր տպարան եւ դպրոց: Առնուազն մէկ դպրոց ունէին Նիկոմիդիայի գրեթէ բոլոր հայաշատ գիւղերը՝ Քուրդբելէն (ունէր 2 դպրոց), Օրթագիւղը կամ Միջագիւղը (ունէր 1 դպրոց), Ասլանբեկը, Կէյուէն (Գէյուէն), Խասկալը:*

*Նիկոմիդիա գաւառում հրատարակւում էին մի շարք պարբերականներ. Իզմիտում՝ «Սուրհանդակը», «Հայրենասէրը», «Բիւթանիան», «Երկիրը», Օվաճըգում՝ «Քնարիկ» թերթը, իսկ Արմաշում՝ «Յոյս» հանդէսը:*

*«Բիւթանիա» շաբաթաթերթը լոյս է տեսել 1910-1912 թթ. նախ՝ Կ. Պոլսում (1910 թ., թիւ 1), յետոյ՝ Իզմիտում (1910 թ., թիւ 2 - 1911 թ., թիւ 9), ապա՝ Ատաբազարում (1911 թ., թիւ 10 (ապրիլի 20-ից) մինչեւ վերջին համարը): Այն սկզբում տասնօրեայ պարբերականութեամբ էր տպագրւում, իսկ 1911 թուականի թիւ 22-ից մինչեւ հրատարակութեան վերջին շրջանը լոյս էր տեսնում շաբաթը երկու անգամ:*

*«Բիւթանիան» ազգային-գրական և քաղաքական-տնտեսական շաբաթաթերթ էր: Ծրագրային զեկոյց-խմբագրականում նշւում էր պարբերականի ուղեգիծը: Այն ձգտում էր դառնալ անկողմնակալ մամուլի օրգան, որի շուրջ կը համախմբուէին Նիկոմիդիա գաւառի երիտասարդ մտաւորականները: «Բիւթանիան» ցանկանում էր համախմբել նրանց եւ դառնալ «բեմ մը, ուրկէ անոնք իրենց անկաշկանդ խօսքը կ'ըսեն հասարակական գործերու եւ երեւոյթներու մասին, ըլլալ շրջանի կեանքին եւ առհասարակ աշխատաւոր ժողովուրդի ցաւերուն*

1 *Մինաս Գասպարեան, Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ*, Պարտիզակ, 1913, էջ 24:

2 *Հայ ժողովրդի պատմութիւն*, Երեւան, 1974, հտ. 5, էջ 535: